տներ և գոմեր հրդեհուել — այրուել ու մոխիր են դարձել, բայց չարագործները անյայտ ու անպատիժ են մնացել։ 60—75 կտրիճ և քաջ Հայ երիտասարդներ հէնց վարելիս, ցանելիս և կամ հնձելիս՝ գնդակահար են եղել վերջին 30 տարուայ մէջ։

Դժբախտ երկրագործ ժողովրդի եղջիւրաւոր էնդանիների եղջիւրները արմատից փշրելը, ականջներից մէկը կտրելը, կամ պոչից ու աչքից զրկելը և կամ յետևի ոտքի ծունկի վերևից հասատերակը ջլատելը, Թուրքերի համար շատ հասարակ և սովորական բաներ են։ Այսպիսի վայրենի բարբարոսութեամբ նրանք ուրախանում և գուարճանում են, որ իրենց հարևան գեաուրները (անհաւատները) մեծամեծ ցաւներ են կրում և թշուառ վիճակի մէջ են ընկնում։ Վերջին 1897 և 1900 թ. երբոր եղել եմ իմ հայրենի աշխարհում, տեղական Հայ և Թուրք ազդեցիկ գիւղացիներին մի՛շտ յորդորել և խրատել եմ, որ իրենց այդպիսի կործանիչ արարքներին վերջ տան ընդ միշտ։ Իբրև օրինակ իմ տեսածներիցս առաջ բերելով՝ ասել եմ, թէ «Սրիմի ընդարձակ դաշտերում, դուք կտեսնէք խոտի բազմաթիւ դէզեր, դարմանով լիքը մարագներ, որոնք պահւում են իբրև պաշար միւս—հետևեալ տարուայ համար։ Սակայն այդ խոտի դէզերին կամ դարմանով լիքը մարագներին ոչ ոք չի մօտենում, չի գողանում և չի հրդեհում ու այրում։

Դուք կտեսնէք Սրիմում անթիւ ու անհամար մշակուած հրաշալի պարտէզներ ու այգի-